



ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅՈՒ «ՀԱԽԱՔՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԿՈՐԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

«Հաւաքումն Պատմութեան» արժէքաւորջ երկի ընդհանուր ազգիւրազիտական քննութիւնը ցոյց է տալիս, որ նրա հեղինակը՝ Վարդան Արեւելյան ժամանակագրական յաջորդականութեամբ օգտագործել է իրեն մատչելի գրեթէ բոլոր նախընթաց պատմագրական բնոյթի հայերէն աղբիւրները⁽¹⁾: Ըստ այսօ, օրինական հարց է առաջ դալիս, թէ ինչո՞ւ նա պիտի բացառէր, կոմ՝ արդեօք բացառել է, այն մի քանի աղբիւրները, որոնք կորած են համարւում առ այսօր մեզ հասած չլինելով պատճառով, առաջին ժամանակին եղած պիտի լինէին նրա արածագրութեան տակ: Բացի այդ, այն հանգամանքը, որ Հաւաքումն Պատմութեան» մէջ նաև ընդգրկուած են այն իրադարձութիւններն ու ժամանակները, որոնց վերաբերում են նշուած կորած աղբիւրները, և դրանց վերաբերեալ նիւթերի զգույի մասի մայր հասցէն դեռեւ մեզ յայտնի չէ, հարկադրաբար կրկնել է տալիս նոյն հարցումը:

Աւելին ֆինքը՝ Վարդան Արեւելյան տեղիկացնում է, որ սուսապէս օգտուել է կորած աղբիւրներից առնուազն երկուսի՝ Միսիթար Անեցու և Յովհաննէս Վանականի երկերից⁽²⁾: Բանասիրութեան մէջ արդէն ժամանաշաւած է, որ նա նոյնիսկ սոզակի քաղուածներ կատարել է Միսի-

(1) Այս մասին առանձին խոռը կը լինի Վարդան Արեւելյան նախընտես մեր մենագրական աշխատավեան մէջ:

(2) Վարդան Արեւելյան, Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 92, 146-147:

թար Անեցու աշխատութիւնից⁽³⁾, իսկ կորած միւս աղբիւրներից՝ յատկապէս Շապուհ Բագրատունու, Յովհաննէս Սարկաւագի, Յովհաննէս Վանականի երկերից օգտուած լինելը կատածանքի ենթակայչի եղել թէկ, սակայն համոզիչ հաստատումներ էլ չեն եղել առ այսօր⁽⁴⁾: Առ այս, կարծում չենք, որ աղբիւրագիտական մեր քննութիւնները իրաւունք են տալիս հաւասարելու աւելին, ինչքան էլ որ կորած աղբիւրների բացակայութիւնը բնագրական ուղղակի համեմատութիւնների հնարաւորութիւն չի տալիս և բատայդմ վերջնական եղրակացութիւններ հնար չի լինի գոյացնել, առաւել ևս, երբ անդի սղութեան պատճառով փոխառուած հատուածները, երբեմն շատ ընդարձակ, այսահետ ի վիճակի չենք լինի նիրակայացնել⁽⁵⁾:

Սապար է, որ Շապուհ Բագրատունին թ. Դարի երկրորդ կէսի և ժ. Դարի սկզբի

(3) Նոյն աեւում, Յառաջաբան, էջ իւ:

(4) Ն. Ակիմեան, Մատենագրական Հետազոտութիւններ, Ա., Վենետիկ, 1922, էջ 185, 195, 201; J. J. Muyldermans, La Domination Arabe en Arménie..., Louvain, 1927, էջ 110, 126: Մեզ ծանօթ են նաև Ֆիրման Գուլյամեանի երկու յօդաւածները Միսիթար Անեցու Անեցու երկերի մասին հաղորդումների վերաբերեալ, սրան իսուած է նաև Միսիթար Անեցու և Վարդան Արեւելյան երկերի առնջաթիւնների մասին, կան և այլ հեղինակներ, որոնք այս կապակցութեամբ ունեն որոշ սկնարկումներ իրենց ասքրեր աշխատաւթիւնների մէջ Այժմ ձեռքի տակ շատենալով դրանք, դժբախտաբար յղութ չենք կարող անել:

(5) Այս ևս կատարելու ենք մեր մենագրական վերցուիշեալ ուսումնասիրութեան մէջ:

հեղինակէ, հետեւարար նա կարող էր պատմել միայն մինչև տուեալ ժամանակահանտաւածը և այդ ժամանակ տեղի ունեցած իրադարձութիւնների մասին։ Բարերախտարար, նրա ժամանակակից ու աշխատութեանը քաջ ծանօթ Յովհաննէս Դրասխանակերտցու մանրամասն և յստակ վկայութիւնների(6) շնորհիւ, համեմատարար աւելի սրոշակի է գառնում, թէ ինչ իրադարձութիւնների ու ժամանակաշրջանի վերաբերեալ հազորդումներ է պարունակել Շապուհ Բագրատաւանում մեզ չհասած երկը։ Այս երկի բովանդակութեան մասին յիշեալ միանգամայն հատասահ վկայութիւնները կարեսը և օգտակար են նաև նրանով, որ թոյլ են տուլիս դրա և ՀՀաւաքում Պատմութեանց առնչութիւնները սրանել սրոշ հատաւածների սահմաններում, որոնցում նոյնպէս պատմում է համապատասխան ժամանակի ու իրադարձութիւնների մասին։ Տուեալ գէպքում մեզ օգնում են նաև այլ իրադութիւններ։ Ազրիւրագիտական հետազոտութիւններից պարզ է գառնում, որ Վարդան Արևելցին այս նոյն ժամանակաշրջանի ու գէպքերի մասին խօսելիս, անմիջաբար օգտաւել է Մովսէս Կաղանկատուացու, Ղեռնդ Երէցի, Յովհաննէս Դրասխանակերտցու, Սահմանուո Տարօնացու (Ասոդիկի) պատմագրական աշխատութիւններից, և բաւականին որոշակի ճշգրւած են դրանցից քաղուածացար առնուած հատուածները։ Յայտնի է գառնում նաև, որ սովորաբար շատ վըստահելով իր աղքիւրներին, Վարդան Արքելցին, ևթէ նոյնիսկ ամբողջական մեծ կամ փոքր հատուածներ չի վերցնում, այլ սոսկ համառօտում է իր սկզբնաղբերները, այդուհանդեմ պահպանում է իր քաղուածածների սկզբնական ինքնութիւնը ու անօք որևէ չափով։ Այս իրադարձութիւնների հիման վրայ էլ, բնական է, բաւականին սոսոք զատորոշւում են այն հատուածները, որոնք բաւացի առնուած կամ քաղուած են մեզ գեռես ոչ ծանօթ, կորած կամ գեռ առ այսօր մեզ չհասած աղքիւրներից։

(6) Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 7, 131-132, 141։

Ահա, այս բարարի հիման վրայ, ուշադրութեան է արժանանուած շնորհագումն Պատմութեան Վենետիկեան 1862 թ. հրատարակութեան 76-80 էջերում տեղ գտած բրոյց անկելցոցն ի մեծ պատերազմին ... և ել Բարգէն ընդդէմ նորա երկերիւրօք և ջնջեաց զնա ի սպառ հատուածը⁽⁷⁾, ինչպէս արդէն նկատուած է բանասիրութեան մէջ⁽⁸⁾։ Այստեղ պատմուող դէպքերը հիմնականում վերաբերում են Յովհաննէս Դրասխանակերտցու Շապուհ Բագրատունու երկին վերագրած ժամանակահանտուածին և նշած անձնաւորութեանց՝ առաւելապէս Աշոտ Ա. և Շապուհ Բագրատունիների գործունիչութեանը։ Յատկանչական է, որ նշուած հատուածը սահմանագծեւում է սկզբից՝ Ղեռնդ Երէցի, վերջից՝ Յովհաննէս Դրասխանակերտցու երկերից քաղուած տողերով, գտնուած է դրանց միջև ըստ որում, ուշադրութեան արժանի է և այն, որ սոյն հատուածին նախորդող տողերում նշուած է Գէորգի (Արտածեռն սոտանից, 492-495 թթ.) կաթողիկոսանլը, սրից անմիջիապէս յետոյ Յովհաննէս Դրասխանակերտցին յայտնում է, որ Հագարացիների և Հայ իշխանների մասին զրոյցները իր երկում պահպառում են, անկայն դրանք⁹ առկայ են Շապուհ Բագրատունու աշխատութեան մէջ⁽⁹⁾։ Էստ երեսոյթին, Վարդան Արքելցին, որն այնքան քաջ ծանօթ է եղել Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութիւնում մանրամասնութիւններին, վարուել է ըստ այս յիշեցման և, դիմելով Շապուհ Բագրատունու աշխատութեանը, այս ու յուզօրդ հատուածները փախառէլ դրանից։ Մեզ թուում է, որ սա առարկութիւն զերցնող ճշմարտութիւն է։

Ընդամենը մի էջ յետոյ, որը քաղուածարար առնուած է Յովհաննէս Դրասխանակերտցու աշխատութիւնից⁽¹⁰⁾, սկըսուած է բաւականին ընդարձակ մի այլ հատուած քիչայց աւելի է աստ ... ի նշան

(7) Տե՛ս մահրամատն նոյն տեղում։

(8) Ն. Ակինեան, Նշուած աշխատութիւնը, էջ 185։

(9) Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 131։

(10) Նոյն տեղում, էջ 111-131։

հոգեւոր բժշկութեանց⁽¹⁾, որը նոյնպէս քաղուած է Շապուհ Բագրատունուն երկից, որովհետև այնտեղ ամփոփուած նիւթը գրեթէ հիմուլին բացակայում է մեզ յատնի միւս գրաւոր ազդիւրներում և փաստական ուժամտնակագրական առնչութիւններով կապում է Յօվհաննէս Դրաստանակերցու Յազգուն Բագրատունուն վերաբերեալ վերոյիշեալ վկոյութիւններին ու համապատասխանում է դրանց, եթէ նոյնիսկ այնտեղ յիշատակութիւն կայ, թէ այն քաղուածներ է պարունակում Փառ Պատրիարքի Զաքարիա Զոգեցի Կաթողիկոսին ուղղուած մի թղթից, ուս չի նշանակում որ այդ քաղուածները կատարուած են Վարդառ Արեւելցու ժամանակ, նրա ձեռքով, և ոչ աւելի շուտ՝ Շապուհ Բագրատունու իսկ կազմից և նայնուութեամբ կամ մասնակի միջամտութիւններով մաւար գործել ՀՀաւաքառամի Պատմութեանց մէջ, Հաս երեսոյթին, ստոյգն էլ այս է. Շապուհ Բագրատունին ինքն է ձեռքի տակ աւնեցել այդ թուղթը և օգտուել դրանից. և դու ոչ միայն նրա համար, որ Փառի և Զաքարիա Զոգեցու թղթակցութիւնը իր ժամանակ կատարուած իրողութիւն է, այլ և նրա համար, որ, շատ հաւանական է, Վարդառ Արեւելցին ևս անմիջական ծանօթութիւն չունի յիշեալ թուղթի հետ, ինչպէս և չունեն այդ շրջանի մասին պատմող Յօվհաննէս Դրաստանակերցի, Ուխտաննէս, Ասողիկ պատմիչներն ու մեզ ծանօթ այլ գրաւոր ազդիւրներն անդամ, որոնցից և Վարդառ Արեւելցին չէր կարող այն քաղաք լինել: Առաւել ճշմարիս պէտք է համարել այն, որ Վարդառ Արեւելցին սւղակի օգտուել է Շապուհ Բագրատունու երկից, ուր զետեղուած են եղել նաև յիշեալ թղթից կատարուած համապատասխան քաղուածները:

Գտնուած ենք նաև, որ միանգամայն ստոյգ պէտք է համարել այն վարկածը, ըստ որի Շապուհ Բագրատունու երկից օգտուած հեղինակների Յօվհաննէս Դրաստանակերցու, Ուխտաննէսի, Ասողիկի, Մինիթար Անեցու աշխատութիւններից

միջնորդաբար այլ հատուածներ ու ընդմիջարկութիւններ էլ մուտք են գործել Վարդառ Արեւելցու ՀՀաւաքառամի Պատմութեան մէջ, որոնք աւելի որոշակի կարող են զատարոշուել, եթե համապատասխանաբար դրանք ճշգուեն նաև վերօյիշեալ աշխատութիւնների մէջ:

Աղքիւրագիտական ընդհանուր քննութիւնը գործեալ աւելի քան հաւանական է գործնում այն, որ Վարդառ Արեւելցին օգտուել է նաև Յօվհաննէս Սարկաւագի Պատմութիւննից, որը, ինչպէս յատնի է, նոյնպէս առ այսօր մեզ չի հասելու Որոշ է, որ Յօվհաննէս Սարկաւագը տպարել է առեղծագործել է մեն. Դարձի երկրորդ կէսին և մի. Դարձի առաջին քառ սորդին: Նրա երկից մեզ հասած հատուկներու կատարուածները, ինչպէս նաև գրաւոր տկնորդները, յատկապէս Սամուէլ Անեցու և կիրակոս Պանձակեցու կողմից, հնարաւորութիւն են առաջիս ճշգելու, թէ մասաւորութիւն ինչ առաջիս ճշգելու, թէ մասաւորապէս ինչ ժամանակահատուած է ընդգրկել այն, ինչ բովանդակութիւն է ունեցել եացին, Յամենայի գէպս, պարզ է, որ Յօվհաննէս Սարկաւագը գրել է Պատմութիւն կամ ժամանակազրութիւն սկսած Սէջուկների Անդրկովկասու ու Հայուստան մուղեց գործելու (գուցէ և աւելի վաց) տարիններից ընդհոււկ մինչև նրանց պետութեան քայլքայումը, հաւանաբար և դրանից յետոյ՝ 1125-1126 թուականները, ինչպէս կը տեսնենք ստորեւ:

Վարդառ Արեւելցու ՀՀաւաքառամի Պատմութեան մէջ ևս պատմուում է այդ ժամանակահատուածի իրադարձութիւնների մասին: Պարզուում է, որ Վարդառ Արեւելցին այս առնչութեամբ իր նիւթերից մի կարենը մասը քաղում է, յատիք բառացի, Մատթէոս Ուռնայիցու «Ժամանակագրութիւններ», մասամբ, ինչպէս կը տեսնենք յետոյ, Մինիթար Անեցու ժամանակագրութիւննից, ասկոյն նաև այլ մէկ, կամ աւելի, մեզ անձանոթ դրբեւրից: Այսպէս ենք դասաւմ այն հիմնական պատմառով, որ իր քաղաք այդ նիւթերից մի զգալի մասը բացակայում է մեզ հասած աղքիւրներում: Ապա, «Պատեղից կա-

(1) Տե՛ս Հանրապետու Վարդառ Արեւելցի, նշուած աշխատութիւնը, էջ 81-87:

բող էր Վարդան Արևելցին սիւթերի արդ մասը ունենալ իր տրամադրութեան տակ, եթէ ոչ յատկապէս Յովհաննէս Սարկաւագի կորած աշխատութիւնից, որը ժանօթ էր նրան և որտեղ էլ հէնց պիտի լինէին նաև այդ նիւթերը: Եթէ Վարդան Արևելցին ուզգակի չի յայտնում Յովհաննէս Սարկաւագի նշուած երկից իր օգտուելու մասին, այդ չի նշանակում որ դա տեղի չի ունեցել ու նա չի օգտուել այդ երկից: Յայտնի է, որ միջնագարօւմ, ոչ միայն Հայուստանի ռահմաններից ներս, մատենագիտական ընկալեալ աւանդոյթ է եղել՝ ոչ անպայման նշել օգտագործուած աղբիւրը կամ նրա հոգինակից: Վարդան Արևելցին ևս գործնականում հետեւել է այդ աւանդոյթին և միշտ չէ որ նշել է իր օգտագործուած աղբիւրները թէ՛ իր ՀՀաւաքումն Պատմութեանց և թէ՛ իր բուլոր միւս աշխատութիւնների մէջ: Այսպէս որ, մեր կործիքով, նա կարող էր և իրապէս էլ օգտուել է Յովհաննէս Սարկաւագի Պատմութիւնից, քանի որ այս շրջանի ու նիւթերի մասին պատմող այլ առյօնը կորած համարուող պատմագրական երկի մասին խօսք չի եղել:

Հստ մեզ, Յովհաննէս Սարկաւագի Պատմութիւնից քաղուած հատուածներից է այն, որ զբաղեցնում է ՀՀաւաքումն Պատմութեան 102—104 Էջները: Ժոկ թագաւորն Կարուց ... արտաքոյ կարգաց զիաթուղիկոսութիւնու: Այստեղ պատմուածների (Փատլունի, Անիի գրաւածն, Ալիքասլանի սպանութեան, Մէլիքշահի գտնակալութեան ևայլն) վերաբերեալ շատ նուազ ու տարածած ակնարկութիւնների կան պատմագրական մեր միւս աղբիւրներում: Հստ որում, Սամուէլ Անեցին, որը Յովհաննէս Սարկաւագի երկից օգտուել է, նոյնիսկ գրաւացի հատուածներ պահպանել նրանից, միաժամանակ շատ որոշակի վկայում է, որ Յովհաննէս Սարկաւագի ստոյգ գրել է նաև 1090 ականների մասին⁽¹⁸⁾, այսինքն, երբ տեղի էին ունեցել վերոյիշեալ հատուածում նկարագրուած իրադարձութիւնները: Կիրակոս Դանձակեցին ևս հաստատում

(18) Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1912, էջ 118—119, 120.

է նոյնը⁽¹⁹⁾: Ուստի, շատ հաւանական է նաև այս ենթադրութիւնը:

Այսպիսին է, մեր կարծիքով, նաև յաջորդող հատուածը. «Իսկ զտէրն Անոյ ... իմաստութեանէ քսու արանց, ... Յայնմ ժամանակի ... զոր և արարին իսկ»⁽²⁰⁾, նմանապէս պատճառարանուած համապատասխան միւնոյն փատարկումներով: Այս հատուածի բավանդակութիւնը միանդամայն համատեղելի է Յովհաննէս Սարկաւագի Պատմութեանը բռնկապութեան վերաբերեալ մեր ունեցած վկայութիւնների հետ, և, մասնադի, քանի որ մեզ յայտնի միւս աղբիւրները այսակեղ պատճուղ դէպքերի մասին ևս գրեթէ հիմովին բոււմ են, ապա, թւում է, միանդամայն տեղին է մեր դիտողութիւնը առ այն, որ այս հատուածի մայր աղբիւրը ևս Յովհաննէս Սարկաւագի կորած Պատմութիւնուն է, եթէ անդում միջնորդաբար, ասենք՝ այս դէպքում Միխթար Անեցու երկի միջոցով այն մուտք գործած լինի ՀՀաւաքումն Պատմութեան մէջ:

Այս առումով ուշադրութիւն է գրաւում յատկապէս 1090—1125 թուականների իրադարձութիւնների մասին պատմող քիչ վերը ակնարկուած հատուածներից մէկ ուրիշը. «Ի՞րբեք լոււա զայս ... Տէր պահեաց զնա այսպէս»⁽¹⁸⁾, որը նոյնապէս ուղղակի չի առնչում մեզ ծանօթ գրաւոր տարիւրներին, թէև երբեմն ընդմիջում է Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակապրութիւն»ից առնուած միջնակեալ մանր հատուածներով, շատ հաւանական է, որ նմանապէս գալիս է Յովհաննէս Սարկաւագի նշուած աշխատութիւնից միւնոյն ևեթ հանգամանքներով: Առկայ փոքր ընդհանրութիւնները, որոնք հազուադէպ նկատելի են գառնում մասմամբ Սամուէլ Անեցու և կիրակոս Գանձակեցու երկերի հետ համեմատելիս, իրողութիւնը չեն փոխում, այսինքն, այդուհանդերձ, նըշ-

(18) Կիրակոս Գանձակեցի, Հայոց Պատմութիւն, Երևան, 1963, էջ 84:

(19) Տե՛ս մանրամատ Վարդան Արեւելցի, Նշուած աշխատութիւնը, էջ 105—107, 108—109:

(20) Նոյն տեղում, էջ 116—121:

ուած հատուածը չի կտպւում նրանց երակերին, մանաւանդ որ իրենք ևս այս առնչութեամբ սնած են նոյնպէս բացակայ աղբիւրներից Ուստի, իրեւ սկզբանզրիւր մնում են առ այսօր կորած գրտուր աղբիւրները, բնական է, նրանք, որոնք պատմել են այդ ժամանակաշրջանի և իրադարձութիւնների մասին, տուեալ դէպքում՝ Յովհաննէս Սարկաւագի և Մխիթար Անհցու երկերը, Մխիթար Անհցուց օգտուելու մասին, ինչպէս մատնաշեցինք, արդէն Վարդան Արևելցին ինքն է խոստովանում, իսկ Յովհաննէս Սարկաւագի պարտգային կարող ենք նկատել տուլ նաև հետեւելը. — Ինչպէս նախորդ հատուածները, այնպէս էլ այս վերջինը րովանդակութեամբ ու ժամանակագրականորէն զուգորդում է նրա ՀՊատմութեան րովանդակութեան վերաբերեալ մեզ հասած վկայութիւններին, որգանապէս կապուած է նախընթաց հատուածներին և աւարտում ոչ պատահանորէն այնտեղ, մինչեւ ուր կարող էր նու նոսցնել իր ՀՊատմութիւնը՝ 1125—1126 թթ.։

Բացի այդ, տուեալ գէպքում գարձեալ մեզ բոլորովին էլ պատահական չի թուում, որ Վարդան Արևելցին ընդհատելով իր պատմական նիւթի հաղորդումը էինց այնտեղ, որտեղ և աւարտում է

վերոնշեալ սոյն հատուածը, միջանկեալ սկսում է պատմել Յովհաննէս Սարկաւագի կեանքի ու գործունէութեան մասին, և այնուհետեւ ըստ կարգի շարունակում իր պատմութեան շարադրանքը Յովհաննէս Սարկաւագի մահուան թուականից անմիջապէս յետոյ, Այս սահմանագիծը հէնց այնպէս չի ստեղծուել, Ըստ երեսյթին, Յովհաննէս Սարկաւագի ՀՊատմութիւննար աւարտուել է հիմնականում ժամանանշուած այս վերջին հատուածում ընդգրիկուած հազորդումներով և Վարդան Արևելցին այդ իսկ պատճառով հէնց այստեղ է հարկ համարել մի քանի խօսք ասել նրա հեղինակի՝ Յովհաննէս Սարկաւագի մասին, մանաւանդ որ անմիջապէս յետոյ շարունակուող բնագիրը արդէն սոսյդ այլ աղբիւրից է և վերաբերում է 1130 թուականին, երբ նու մէկ տարի տառջ արդէն իսկ մահացել էր:

Ուստի, աւելի սոյցի կըրակացութեան համար սպասելով հանդերձ լրացուցիչ փառերի, նոյնիսկ՝ Յովհաննէս Սարկաւագի ՀՊատմութեանց երջանիկ յայտնաբերման, մեր այստեղ մատնանշած բանախրական-աղբիւրագիտական իրողութիւնները, կարծում ենք, գիտուկան որոշակի հետաքրքրութիւնից զուրկ չեն:

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

(Նարունակելի)

